



68. ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՐՍ

Գեղացի մե իրեք աղջիկ ունեի՝ մեծ աղջիկ, միջնեկ աղջիկ, պզտիկ աղջիկ: Օր մե էդ աղջըկներ մեկ-մեկ բաղարջ հըտ ուրանց, կէրթան դաշտ բանջըրի՝ կը տեսնան հանդե ճամպեզրին հալվոր մե նստուկ՝ կը տքա:

Մեծ աղջիկ կը հարցու.

— Պապե, չորի՞ն հմալ կը տքաս:

Հալվոր կըսե.

— Անոթնե խուղումսի կոտրեր է, մանցեր իմ ճամպին:

Մեծ աղջիկ ու միջնեկ աղջիկ ծակաչք կէղնին, զուրանց փայ-բաժին բաղարջ չըն իտա, պզտիկ աղջիկ ուր բաղարջ կիտա հալ-վորուն, կըսե.

— Ա՛ն, կի՛, պապե:

Հալվորն օրնեթք կիտա, ղբաղարջ կուտե, քիչ մե կը պնդի, դելնա չընկնա ճամպա: Շատ կէրթա, քիչ կէրթա, կը տեսնա հան-դե ջըհել ձիավոր մե քրտնփշուկ էն դիեն գիկա: Դու մ՛ըսի, էդի՛ էրկրի թագավորի տղեն կէղնի, զնեճիր փախցուցի, չընկեր է չետե, կը քշե, օր հասնի: Տղեն օր զհալվոր կը տեսնա, կը մոռնա զնեճիր, կը կանի, հըտ հալվորուն խոսք ու ղրուց կէնե: Հալվոր կը պատմե՝ ըշտե հմլա-հմլա բան: Թագավորի տղեն զձին կը քշե, կը հասնի աղջըկներուն:

— Բարե, աղջըկներ, ձըզնե ո՞ն է պզտիկ:

Մեծ աղջիկ կըսե.

— Ես՝ մեծ, իդա՝ միջնեկ, ինա լե մեր պզտիկ քուր:

Տղի սիրտ պինդ կը կպի պզտիկ աղջըկան, բան չըսե, ձիու գլուխ կը շըքե, քշե կէրթա տուն:

Տղեն թըղ էրթա տուն, մենք դառնանք աղջըկներուն: Յիրևուն օր կէղնի, աղջըկներ, շալակ ուրանց թուլու-թուլու բանջար՝ ղիկան տուն: Մեծ աղջիկ ու միջնեկ աղջիկ՝ նա՛ հալվորու, նա՛ թագավորի տղից բաս չըն էնի, մինակ պզտիկ աղջիկ զանցք կը պատմե պապուն ու մամուն:

— Աղեկ իս էրի, լա՛ո, մարդ մե ազատեր իս մեռնելուց,— կըսե պապ:

Թագավորի տղեն օր զնեճիր կորցուցեր՝ նիաթավեր էր, մկա՛ իմալ ախշար տան ուրին, ուրախ-զուրախ կէրթա մըտ թագավոր պապ: Յողի նստուկ կէղնիս թագավորի յոտ ու ձեռք՝ նազիր-վազիր, խազնադար ու սիլախտար, մեկ խոսքով ուր մարդիկ, տղեն գլուխ կիտա, թագավոր պապուն կըսե.

— Իմ ա՛ջքի լուս ծնող պապ, կըսիս՝ կարգվի, հա՛ կարգվի, քու խոսք չըմ թալի գետին, օրոշիր իմ խոսքդի կատարիմ:

— Աղեկ կէնիս, օր ծերութենին ընձի կուրախցուս: Է՛, ըսե սա՛նք, աղջիկ ո՛ն է:

— Գեղացի աղջիկ մե:

Թագավոր զնիաթ կը կախե, կիշկե ուր նազիր-վազիրներուն, յանի թե՛ կը տեսնա՞ք՝ թագավորի տղա՛, ձեր աղջիկ չո՛ւզե, գացի կպի քըջլատ գեղացու մե:

— Չէ՛,— կըսե թագավոր պապ,— ես խաբուլ չիմ:

Տղեն ուր մեջ կը հեռուտի, հմա կը զսպե ուրին, կըսե.

— Թագավո՛ր պապ, գու գինաս, օր քու խոսք ընձի օրենք է, մինակ բան մե պտի ըսիմ, անկաջ էրե: Գեղացին լե մեր պես մարդ է: Էն ջորեր, էն զուգս ու զարդարանք օր հագուս ինոր, էնի ինչո՞վ պակաս կէղնի նազիր-վազիրներու աղջըկներուց: Մեծորեք ըսերին՝ աջք կը տեսնա, սիրտ կը սիրե: Թե գուզիս, օր քու տղեն բախտավոր էղնի, զէդ աղջըկան յուղե, թե չուզիս՝ էդի լե քու կամքն է:

Թագավոր կիշկե ուր նազիր-վազիրներուն, ուր մարդոց, կըսե.

— Արեք դուշ բաց թողինք, վիր փիջուն օր չիջավ՝ է՛նի է իմ հարս:

Թագավորի հրամանքի վրեն զդուշ բաց կը թողին, դուշ կը թոնա, կէրթա, կէրթա, գիջնա վըր գեղացու պզտիկ աղջըկա փիջուն:

— Աչքդի լուս, ա՛ղջի,— կըսե դուշ,— թագավոր քըզի դուպե ուր տղին:

Թագավորի մարդիկ գիկան տեսնան, օղորդ օր, դուշն էկի, նստի վըր պզտիկ աղջկա փիջուն, դուլ-զուռնա կիտան զարկել,

ղաղջկան կը հագուն-խպուն՝ կը տանին թագավորի քոշկ ու սարեն,
կէղնի թաղավորի հարս:

Մեծ աղջիկ ու միջնեկ աղջիկ՝ զգլուխ ու չոքեր ուրանց կը տփեն
ու կըսեն:

— Վա՛յ, քոռնե՛ր մեր էրկու լուս, մեր ձեռներ թուլնե՛ր, էդի
չըմեն հալվորն էրեց, մենք լե, օր բաղարջ իտենք՝ կէղնենք թագա-
վորի հարս:

